Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-981[1]-05.12.2024-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» 2019 թվականի հունիսի 28-ի ՀՕ-113-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 6-րդ հոդվածը:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 7. Լիազոր մարմինը

1. ՊՄԳ ոլորտում լիազոր մարմինը՝

1) իրականացնում է ՊՄԳ քաղաքականության մշակման աշխատանքներ.

2) իրականացնում է ՊՄԳ ծրագրերի խթանման և տարածման գործառույթներ.

3) ապահովում է ՊՄԳ ընթացակարգի հետ կապված նորմատիվ իրավական ակտերի մշակումը.

4) իրականացնում է ՊՄԳ պայմանագրով սահմանված ֆինանսական պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն.

5) ՊՄԳ ծրագրերը ենթարկում է ընթացիկ մշտադիտարկման՝ պայմանական և ուղղակի պարտավորությունների տեսանկյունից.

6) կատարում է սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված վերլուծություն.

7) տրամադրում է սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված եզրակացությունը.

8) իրականացնում է սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2.1-ին կետում «քաղաքականություն մշակող մարմին» բառերը փոխարինել «լիազոր մարմին» բառերով.

2) 2.4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող այլ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-981[1]-05.12.2024-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» 2019 թվականի հունիսի 28-ի ՀՕ-113-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 6-րդ հոդվածը:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 7. Լիազոր մարմինը

1. ՊՄԳ ոլորտում լիազոր մարմինը՝

1) իրականացնում է ՊՄԳ քաղաքականության մշակման աշխատանքներ.

2) իրականացնում է ՊՄԳ ծրագրերի խթանման և տարածման գործառույթներ.

3) ապահովում է ՊՄԳ ընթացակարգի հետ կապված նորմատիվ իրավական ակտերի մշակումը.

4) իրականացնում է ՊՄԳ պայմանագրով սահմանված ֆինանսական պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն.

5) ՊՄԳ ծրագրերը ենթարկում է ընթացիկ մշտադիտարկման՝ պայմանական և ուղղակի պարտավորությունների տեսանկյունից.

6) կատարում է սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված վերլուծություն.

7) տրամադրում է սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված եզրակացությունը.

8) իրականացնում է սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2.1-ին~~րդ~~ կետում «քաղաքականություն մշակող մարմին» բառերը փոխարինել «լիազոր մարմին» բառերով.

2) 2.4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

~~3.~~1 Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

~~4.~~2 Սույն օրենքից բխող այլ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-981-05.12.2024-ՏՀ-011/0), «ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-981[1]-05.12.2024-ՏՀ-011/0), «ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-981[2]-05.12.2024-ՏՀ-011/0), «ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-981-05.12.2024-ՏՀ-011/0) ԵՎ «ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-981[4]-05.12.2024-ՏՀ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	««Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածներ	Առաջարկում ենք ««Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում «2.1-րդ» բառը փոխարինել «2.1-ին» բառով, ինչպես նաև 5-րդ հոդվածի համարակալումը վերանայել:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

2.	ՀՀ կառավարություն	«Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված, «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	«Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածով նախատեսվել է «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի 2-րդ հոդվածի 14-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերը փոխարինել «***խաղային գործունեության ոլորտում կառավարության քաղաքականությունը մշակող մարմին***» բառերով, մինչդեռ Նախագծի 2-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսվել է, որ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Օրենքով լիազոր մարմին հանդիսացող ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված և ընթացիկ վարչական վարույթներն իրականացվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, իսկ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո հարուցված վարչական վարույթներն իրականացվելու են սույն օրենքով սահմանված ***կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից***: Առաջարկում ենք օրենքի 2-րդ հոդվածում կիրառվող վերոնշյալ ձևակերպումները համապատասխանեցնել միմյանց:	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			Նույն դիտարկումը վերաբերում է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի նույնանման կարգավորումներին: Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի մասերի համարակալումը վերանայել: Նույն դիտարկումը վերաբերում է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի մասերի համարակալմանը: Բացի այդ, նույն հոդվածի 7-րդ մասի «ՀՀ» բառերն առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ **արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ**: Նույն դիտարկումը վերաբերում է ««Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում		

			փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում և ««Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 10-րդ մասում կիրառված նույնանման բառերին:		
3.	ՀՀ կառավարություն	«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	««Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում կիրառված «կառավարության լիազորած» բառերն առաջարկում ենք վերանայել՝ նկատի ունենալով նախագծի 1-ին հոդվածով ««Խաղային գործունեության կարգավորման մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-263-Ն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետում նախատեսված փոփոխությունը:	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է: